

ԲԵՅՐՈՒԹԻ «ԿՐՈՆԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ» ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Բեյրութից խմբագրությանս ուղարկված մի թղթակցությունից «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում բաղվածաբար մի շարք տեղեկություններ «Կրոնասեր տիկնանց համախմբումի» գործունեության մասին:

«Երկու սրբություն գոյություն ունեցած է հայ կնոջ համար՝ իր ընտանիքը և իր Մայր Եկեղեցին: Ջերմեռանդ ու հավատացյալ հայ կինը միշտ ալ թիկունք կանգնած է Հայաստանյայց Սուրբ Եկեղեցիին:

Սնա այս իտեալեն խթանված խումբ մը տիկիններ Պեյրութի մեջ երկու տասնամյակ առաջ հիմնեցին «Կրոնասեր տիկնանց համախմբումը», որուն նպատակն է օգնել Հայաստանյայց Եկեղեցիին և ի մասնավորի անոր համազգային Աթոռ Ս. Էջմիածնին:

Անցյալին հրապարակային ձեռնարկներե, հանգանակություններե և նվիրատվություններե գոյացած գումարներով եկեղեցական սպասներ, շուրջառ, փակեղ, վարագույր, ղրկվեցան Էջմիածին՝ արժանանալով Վեհափառ Հայրապետին, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. կաթողիկոսի գնահատանքին և օրհնության:

Դժբախտաբար Լիբանանի քառամյա քաղաքացիական կռիվները ջլատեցին Համախմբումի գործունեությունը, սակայն չկրցան քայքայել զայն և անա անմիջապես որ առիթ մը ներկայացավ, սույն ազգասեր և հավատացյալ տիկիններ դարձյալ հրապարակ եկան:

Մարտ 23 1980-ին ճաշկերույթ մը սարքեցին Պեյրութի Հ. Բ. Ը. Միության Ալեք Մանուկյան արդիական շենքին ճաշասրահին մեջ, ուր 200-և ավելի երկսեռ ազգայիններ փութացած էին, ոմանք նույնիսկ իրենց փոքրիկներով:

Միության ժրաջան ու նվիրյալ ատենապետուհին՝ տիկին Անգինե Տանձիկյան, բրավ հանդես-ճաշկերույթին բացումը և շեշտեց, թե Լիբանանի քաղաքացիական կռիվները թեև կասեցուցած էին Համախմբումին գործունեությունը, սակայն չէին կրցած զայն ջլատել: Ուրախություն հայտնեց, որ նոր սերունդի անդամներ կհետաքրքրվեին «Կրոնասեր տիկնանց համախմբումի» գործունեությամբ և գաղափարականով: Նույնպես Պեյրութ և ապա արտասահման հաստատված երիտասարդ զույգեր ալ կհետևեին ու կքաջալերեին Համախմբումին գործունեությունը:

Հանդիսության ժամանակ տիկ. Անահիտ Գարակյոզյան ապրումով արտասանեց Թեքեյանի «Ինչ մնաց, կյանքեն ինծի ինչ մնաց» քերթվածը և Հովհաննես Թումանյանի «Էջմիածին»-ը:

Օրվա գլխավոր բանախոսն էր պեյրութահայ ծանոթ մտավորական և կրթական մշակ տիկ. Ազատուհի Սիմոնյան, որ խոսեցավ «Հայ կրոնքն ու հավատքը դարերու ընթացքին» նյութին շուրջ: Հարգելի տիկինը ջերմորեն դրվատեց հայ կնոջ բարեմասնությունները, մանավանդ անոր եկեղեցասիրությունը՝ շեշտելով, թե հայ կինը միշտ ալ աջակից եղած է Հայաստանյայց Եկեղեցիին, մանավանդ անոր Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Ապա տիկ. Ռոզին Պապայան, վարչության ատենադպրուհին, համառոտ տեղեկություն մը ըրավ կազմակերպության գործունեության շուրջ, մանավանդ ներկայացնելով անոր նպատակը: Ըսավ, թե Համախմբումը անցյալին իր հավաքած դրամով աղբյուր-հուշարձան մը շինել տված էր Ս. Էջմիածնի՝ Վեհարանի բակին մեջ՝ հետև-

յալ արձանագրությամբ. «Ի յիշատակ Վեհամայր Սիրանոյշ Պալճեանի. 1884—1974»: Եվ հիմա ալ Վեհափառ Հայրապետին թելադրությամբ ձեռնարկած էր Սևանա լիճի Առաքելոց վանքի նորոգության: Որոշ գումար մը ղրկված էր այս ուղղությամբ և Համախմբումի տիկինները լիահույս էին, թե մնացյալն ալ ժամանակի ընթացքին կղրկվեր:

Օր. Լենա Քյուրքճյան դաշնակի ընկերակցությամբ տիկ. Արփի Յագուպյան Ալահայտոյանի ներշնչումով երգեց կարգ մը ժողովրդական երգեր, իսկ օր. Սիրանուշ Քայայան, Երևանի համալսարանեն, արտասանեց Թումանյանին «Լուսավորչի կանթեղը», Սիլվա Կապուտիկյանեն «Մայրիկիս» և Հովհ. Շիրազեն «Հայոց լեզուն»:

Մատուցանվեցավ համադամ ճաշ, առատ խմիչքով ու մանավանդ քաղցրահամ անուշեղենով՝ մեծապես բարձրացնելով ներկաներուն տրամադրությունը:

Ճաշեն ետք եղավ շքանշաններու տվչության արարողությունը, 24 հոգի, որոնք տասը տարիե ի վեր անդամակցած են Համախմբումին և իրենց անդամի պարտականությունը լիուլի կատարած, ստացան Էջմիածնի տաճարը ներկայացնող ոսկեգույն զարդակոճակներ:

Ներկաները մեծապես խանդավառվեցան և եղան ինքնաբուխ նվիրատվություններ, որուն գումարը հասավ 7650 լիբանանյան ոսկիի: Տեղի ունեցավ նաև վիճակահանություն մը, որմե գոյացավ կոկիկ գումար մը:

Ճաշի վերջավորության պրն. Սիսակ Վարժապետյանը, որ տիկնոջ՝ Համախմբումի վարչական Արաքսիին հետ նոր վերադարձած էր Միացյալ Նահանգներեն, քանի մը խոսք ըրավ Շիքակոյի Տիկնանց Միության գործունեության մասին: Ի միջի այլոց ան ըսավ, թե «Ո՛չ անդնդախոր ծովերը և ո՛չ սլ բարձրաբերձ լեռներ կխաթարեն հայ կնոջ սքանչելի նկարագիրը որ երկինքի տակ ալ ան ծնած ըլլա: Ինչպես դուք հոս, ձեր քույրերն ալ հոն ջերմեռանդ կաշխատին Հայաստանյայց Սուրբ Եկեղեցիին պայծառացման համար: Երեսուներինգ ընտանիքնոց հայ համայնք մը Շիքակոյի կից Փալոս Հայթսի մեջ 350.000 տոլարի պարտավորության տակ մտած է իր Եկեղեցին ու սրահը ունենալու համար: Այժմ սրահը կառուցված է խորանով մը, որ գոցվելով սրահը կվերածվի հավաքավայրի և կիրակնօրյա վարժարանի: Պարտքը գրեթե վերջացած ըլլալով շուտով պիտի ձեռնարկեն եկեղեցիին շինության: Ծանոթ ազգային տոքթ. Ռաֆֆի և տիկ. Շողակ (ծնյալ Վարժապետյան) Հովհաննեսյաններ սրահի կառուցման ծախսին մեծապես սատարած ըլլալով՝ սրահը կկոչվի «Տոքթ. Ռաֆֆի Հովհաննիսյան Մշակութային Կեդրոն»:

Ներկաներ բարձր տրամադրությամբ և գոհ սրտով մեկնեցան սրահեն ջերմորեն շնորհավորելով Համախմբումի ժրաջան վարչականները: Մենք ևս մեր կարգին կմիացնենք շնորհավորություններ մաղթելով, որ կազմակերպությունը նվաճե նորանոր բարձունքներ»: